ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՑՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 00 67, էլ. փոստ՝ meo@ypc.am

Դիտորդ մարմնի կազմը

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Լեւոն ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Արսեն ԽԱՌԱՏՅԱՆ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

«Ֆրի Նյուզ» տեսալսողական ծրագրի «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» հաղորդման վերաբերյալ

Դիտորդ մարմինը 2024թ. օգոստոսի 9-ին հրապարակել է իր Եզրակացությունը "Ֆրի Նյուզ" հեռուստաընկերության եթերում «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» հաղորդման ընթացքում հնչած վիճելի ձեւակերպումների եւ Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի դիմումի կապակցությամբ: Դրանում նշված էր, որ քննարկելով այդ հաղորդաշարի եւ հաղորդավարի առնչությամբ ԴՄ անդամներին փոխանցված ոչ ֆորմալ, բանավոր բազմաթիվ տարակուսանքները, դժգոհությունները եւ վրդովմունքը, Դիտորդ մարմինը (պատահական ընտրությամբ) ուսումնասիրել է «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» հաղորդաշարի որոշ թողարկումներ, որոնց առնչությամբ հատուկ անդրադարձ է հրապարակելու:

ԴՄ Աշխատակարգի 2.6 դրույթի գ. եւ դ. ենթակետերի համաձայն՝ ԴՄ որոշ անդամներ ուսումնասիրել են այդ հաղորդաշարի ս.թ. մայիսյան 15 թողարկում եւ դրանց առնչությամբ տվել իրենց գնահատականները, որոնք վերաբերում են լրագրողական էթիկային եւ լրագրողական ստանդարտներին:

ԴՄ անդամները միակարծիք են, որ այդ հաղորդումը վարող անձը հրապարակային տեսակետ հայտնելու իր իրավունքը ծառայեցնում է իր համար անցանկալի գործիչների եւ անձանց հետ «եթերային հաշվեհարդար տեսնելու» նպատակին: Սա որեւէ կերպ չի կարելի համարել խոսքի ազատության դրսեւորում: Սա եթերային կամ մեդիատարածքում գործած ինքնիրավչություն է: Սա հակասում է լրագրողական ստանդարտներին, քանի որ հարվածի տակ է դնում հանրային տիրույթում քաղաքական եւ այլ տիպի բազմակարծության ու այլախոհության գաղափարն ինքնին:

Եզրակացության մեջ շեշտված է, որ դիտարկված հաղորդումների որոշ հատվածներում Կանոնագրի դրույթների խախտում ֆորմալ առումով չկա, սակայն հաղորդավարն՝ իր եթերային հավակնոտ կերպարով, անհանդուրժողական ու ագրեսիվ պահվածքով շատ մոտ է դրանք խախտելու վտանգավոր սահմանագծին։

ԴՄ անդամների գնահատմամբ՝ հաղորդավարի խոսքում շատ են սպառնալից ձեւակերպումները, կոչերը, որոնք հաճախ թեեւ ընդհանուր բնույթի են՝ անհասցե են, սակայն թողարկման համատեքստից պարզ է դառնում, որ ուղղված են միանգամայն որոշակի՝ ընդդիմադիր հայացքների տեր անձանց։ Օրինակ՝ *«դուք վոնդվելու եք եկեղեցուց, որովհետեւ մեր եկեղեցին պիտի մաքրվի ձեզանից», «դուք ո՛վ եք, որ…», «անում էին բարերարների միջոցով, էդ փողից էլ քաշում էին հայրական օջախ։ Բայց հիմա պետությունը անում ա, իրանք չեն կարողանում փող ուտել։ Բայց հո չե՞ն ասելու՝ չենք կարողանում փող ուտենք, հելեք գնանք միտինգ անենք…», «սրանք են փրկողը, իսկ էն պիղծը, մանկապիղծը ամերիկաների բունկերներում ա նստած, անունը չեմ ուզում տալ, սրա հետ միացել՝ սրբազան պայքար ա անում»։*

Օրինակ՝ մայիսի 24-ի թողարկման մեջ, խախտելով Կանոնագրի 1.4, 1.5 դրույթները, հաղորդավարը քաղաքական ու պետական տվյալ գործչի վերաբերյալ իր անձնական կարծիքը ներկայացնում է որպես փաստ. *«Ամեն գնով ուզում ա հասնել արյունահեղության»։* Նույն թողարկման մեջ հաղորդավարը դիմում է միանգամայն որոշակի անձնավորության՝ սպառնալով վոնդել կրոնական կառույցից. *«Մենք կոնկրետ ձեզ ենք թիրախավորում եւ ոչ միայն թիրախավորում։ Առաջիկայում բոլորդ քշվելու եք եկեղեցուց, քշվելու…. Դուք վոնդվելու եք եկեղեցուց»։*

Մայիսի 6-ի թողարկման մեջ՝ խախտելով Կանոնագրի 1.4, 1.5, 4.7, 5.2, 6.1 դրույթները, հաղորդավարն ուղղակի դիմում է իր համար ատելի քաղաքական եւ պետական գործչին ու հայտարարում. *«Հանցագո՛րծ …, հանցագործ, որի գործած հանցագործությունը միայն վաղեմության ժամկետով կարճվեց, բայց չապացուցվեց, որ հանցանք չի եղել։ Դա հանցագործություն է …, դու հանցագո՛րծ ես»։* Նույն թողարկման մեջ հաղորդավարը տարածում է ակնհայտ կեղծ տեղեկություններ. *«…ը, 44-օրյա պատերազմի ընթացքում, դրանից հետո, էդ ատելության մթնոլորտում մինչեւ հիմա ոչ գվվոցն ա դուրս եկել, ոչ բվվոցը»։*

Հաղորդավարն իր դեմքի քամահրական արտահայտությամբ, ագրեսիվ ժեստիկուլյացիայով ու խրատական տոնայնությամբ անթաքույց հակակրանք է արտահայտում այն գործիչների հանդեպ,

որոնց քաղաքական հայացքները տարբերվում են իր անձնական պատկերացումներից։ Հաղորդավարը թիրախավորում է ոչ իշխանամետ որոշ գործիչների եւ նրանց մասին իր անձնական կարծիքն ու գնահատողական բնույթի դատողությունները, որոնք թույլատրելի են, զուգակցում է այդ գործիչների անձը, գործողությունները, գաղափարները վարկաբեկող խոսույթով, ինչն անթույլատրելի է։ Հաղորդավարն իր ամբողջ պահվածքով ագրեսիա է դրսեւորում այն անձանց հասցեին, որոնք այդ նույն հաղորդաշարում պատասխան խոսքով հանդես գալու հնարավորություն չունեն՝ տվյալ հեռուստաժանրի (հեռուստամենախոսություն) կանոնների համաձայն։

Հաղորդավարի խոսելաոճը բուլինգային է, ագրեսիվ, ինտոնացիան՝ քամահրական, անհանդուրժող, դեմքի արտահայտությունն ու դիմախաղը՝ ատելախառն, ձայնը՝ բղավոցի հասնող, սաստող ու իր համար անընդունելի գործիչների հանդեպ զզվանքով լի։ Իր կարծիքն արտահայտելիս, իր գնահատականները շարադրելիս հաղորդավարն իր պատկերացումներն արտահայտում է լրատվության ստանդարտներին ոչ հարիր եղանակներով՝ ոչ քաղաքակիրթ բառապաշարով, քրեական ենթամշակույթին բնորոշ տարրերով, իր համար անցանկալի գործիչների անձը նվաստացնող ակնարկներով։

Եթերում հաղորդավարի այս կարգի պահվածքը տարածված էր մասնավորապես հետխորհրդային Ռուսաստանի հեռուստաեթերում, բնորոշվում էր «մեդիաքիլլեր» կամ «տելեքիլլեր» եզրույթներով եւ բնորոշ էր ագրեսիվ քարոզչական արշավներ վարող հարթակներին։ Սա «կարծիքի ժուռնալիստիկա» որակվող մեդաարտադրանքի ցածրագույն դրսորումն է եւ վատագույն օրինակը։

Freenews Armenia լոգոտիպով յութուբյան ալիքի «ԱԶԱՏ ՇՓՈՒՄ ԳՆԵԼ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԵՏ» խորագրով թողարկումների տակ շատ են ատելություն, անհանդուրժողականություն, ներհանրային թշնամանք սերմանող արձագանքները, որոնք հաղորդավարի թիրախավորած անձանց հասցեին զզվանք, արգահատանք, խորշանք, հայհոյանք են գեներացնում, սակայն այդ մեկնաբանությունները չեն մոդերացվում։ Սա Կանոնագրի 3.5.6 դրույթի խախտում է։ Այս սոցցանցային տիրույթի «քոմենթների» բաժնում շատ են ֆեյք օգտահաշիվների, ֆեյք օգտատերերի տպավորություն թողնող գրառումները, որոնք բոլորն էլ ունեն մեկ ընդհանրություն՝ ակտիվորեն գովաբանում են հաղորդավարին, իշխանությանը եւ անզուսպ փնովում, անիծում, հայհոյում են հաղորդավարի թիրախավորած ընդդիմադիր գործիչներին։

Ատելության եւ անհանդուրժողականության դրսեւորումների այսպիսի անկառավարելի հորձանքը եւ նույն հաղորդավարի թողարկումների տակ դրանց կուտակումը դեգրադացնում է հայալեզու սոցցանցային միջավայրը եւ հղի է սոցիալական անկանխատեսելի հետեւանքներով: Չարացած զանգվածի ստորին բնազդները մարդկանց խիստ որոշակի եւ փոքրաթիվ շերտի դեմ քարոզչական մեթոդներով ուղղորդելը կարող է վերաճել փողոցային տարերային բռնության ալիքի: Այս տգեղ, մանիպուլյատիվ եւ վտանգավոր երեւույթի հանդեպ տվյալ յութուբյան ալիքը տնօրինողների ակնհայտ անտարբերությունը ենթադրել է տալիս, որ տասնյակ, հարյուրավոր ու հազարավոր ագրեսիվ արձագանքները գուցե գեներացվում են հենց ալիքը տնօրինողների թողտվությամբ կամ լռելյայն համաձայնությամբ:

Այս ամենը հակասում է մեդիաարժեքներին եւ մեդիաստանդարտներին, հատկապես որ կատարվում է հանրային մուլտիպլեքս տնօրինող տեսալսողական մեդիայի՝ «Ֆրի Նյուզի» հեռուստաեթերում: Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի նախաբանում ներկայացված են բարձր մեդիագաղափարներ, որոնցով հարկ է առաջնորդվել՝ «…կարեւորելով ԶԼՄ-ների՝ տեղեկացնելու պարտականությունը, գիտակցելով մասնագիտական եւ բարոյական հնարավորին չափ բարձր չափանիշներին հետեւելու եւ դրանց շուրջ համախմբվելու անհրաժեշտությունը, ընդգծելով հանրային շահին հակասող որեւէ մասնավոր շահով լրագրողներին չկաշկանդելու անհրաժեշտությունը, ընդունելով, որ ԶԼՄ-ներն ու լրագրողները հաշվետու են իրենց լսարանի եւ միմյանց առջեւ»: Ահա այս մեդիաարժեքների ոգին է աղավաղված ու աղճատված «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» հաղորդաշարի բազմաթիվ թողարկումներում:

Հայաստանյան ու հայալեզու մեդիակառույցներին, մեդիահարթակներին, լրատվամիջոցներին, խմբագրություններին, լրագրողներին, հաղորդավարներին, սոցցանցային օգտատերերին եւ սոցցանցային բովանդակություն ստեղծողներին կոչ ենք անում՝

- հանրային տեքստերն ու խոսելաոճը, հանրության հետ շփումներն ու հաղորդակցումը կառուցել փոխադարձ հարգանքի, քաղաքացիական համակեցության նորմերի, քաղաքակրթության եւ հանդուրժողականության հիմքի վրա,
- չտարածել ատելության խոսք՝ թեկուզ թափանցիկ ակնարկների ձեւով,
- չստորացնել այլ կարծիք արտահայտող գործիչներին, անձանց, կառույցներին,

- քաղաքական ընդդիմախոսների հետ հարաբերություններում չգործածել հայհոյանք, քրեական ենթամշակույթին բնորոշ արտահայտություններ,
- չգեներացնել ցածրակարգ խոսք ու ագրեսիվ պահվածք,
- չստեղծել գաղափարական փոքրամասնությանը ճնշելուն հանգեցնող ինֆորմացիոն եւ քարոզչական միջավայր։

Լրագրողական համայնքին կոչ ենք անում պահպանել մասնագիտական բարձր ստանդարտները, պատրաստ լինել ընդունելու սեփական սխալները, ներողություն խնդրել դրանց համար եւ ինքնակամ ուղղել դրանք։

Դիտորդ մարմինն Ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած ԶԼՄ-ների սեփականատերերին, ղեկավարներին, լրագրողներին, նաեւ Նախաձեռնությանը չմիացած մեդիակառույցներին, լրագրողական եւ հասարակական կազմակերպություններին, հանրային գործիչներին, հանրային դեմքերին եւ սոցցանցերում մեծաքանակ հետեւորդներ ունեցող ինֆլուենսերներին (ազդեցիկ անձանց) կոչ է անում սոցցանցերում եւ մեդիահարթակներում ակտիվորեն, խորությամբ, բազմակողմանի եւ շահագրգիռ կերպով քննարկել Փորձագիտական այս կարծիքում բերված վիճահարույց, դատապարտելի, կոմունիկացիոն անջրպետներ ստեղծող եւ հանրային թշնամանք հարուցող երեւույթները։

Մենք վստահ ենք, որ նույնիսկ ամենաբարդ խնդիրները կարող ենք լուծել բաց, անկեղծ եւ արժանապատիվ երկխոսությամբ։

Ընդունվել է 2024 թ. օգոստոսի 30-ին,
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետեւյալ կազմով՝

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
«Նյումեգ» հրատարակչության գլխավոր խմբագիր
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Երեւանի մամուլի ակումբի պատվավոր նախագահ
Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
«Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ
Երեւանի մամուլի ակումբի մասնագիտական էթիկայի հանձնաժողովի նախագահ
Արսեն ԽԱՌԱՏՅԱՆ
«Ալիք Մեդիա» լրատվական-վերլուծական կայքի հիմնադիր
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Ռեգիոնս TV» կայքի տնօրեն
ԱՐԱ ՂԱԶԱՐՅԱՆ
Իրավաբան
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Արմավիրի «ԱԼՏ» հեռուստաընկերության խմբագիր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորել են ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցները, որոնք այս պահին 83-ն են: ԴՄ-ն ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնության համաժողովում, 2024 թվականի մայիսի 18-ին: